Հավելված
ՀՀ կառավարության 2014 թ.
մայիսի 22-ի նիստի N 21
արձանագրային որոշման

Եզրակացություն
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվության վերաբերյալ

2013 թվականին մակրոտնտեսական կայունությունը խաթարող ներքին և արտաքին ռիսկերից կարելի է առանձնացնել համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական աճի տեմպի դանդաղումը, էներգակիրների գների բարձրացումը, օտարերկրյա և ներքին ներդրումների կրճատումը, վարկավորման աճի տեմպի դանդաղումը, որոնք իրենց դերն ունեցան գնաճի կառավարելիության հարցում: Այսպես, պարենային ապրանքների գների և հուլիսին էներգակիրների սակագների բարձրացման հետևանքով տարվա երրորդ եռամսյակում գնաճի ցուցանիշը զգալի բարձրացավ նպատակադրված միջակայքից: Ճնշումները մեղմելու նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը 2013 թվականի օգոստոսին 0.5 տոկոսային կետով բարձրացրեց քաղաքականության տոկոսադրույքը՝ այն հասցնելով 8.5 տոկոսի. վերջին գրեթե երկու տարվա մեջ դա առաջին փոփոխությունն էր: Սակայն հետագայում գնաճի տեմպը և տնտեսական ակտիվությունը զգալի նվազեց, և կենտրոնական բանկը իր միջոցառումը հետադարձեց՝ նոյեմբերին և դեկտեմբերին քաղաքականության տոկոսադրույքն իջեցրեց մինչև 7.75 տոկոս: Այս պայմաններում, ի հայտ եկող մակրոտնտեսական կայունությանը սպառնացող ռիսկերը հնարավոր եղավ հաղթահարել դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների արդյունավետ կոորդինացման միջոցով, երբ կենտրոնական բանկի գործողություններին համարժեք հարկաբյուջետային քաղաքականությունը 2013 թվականին պահպանեց իր զսպող ուղղվածությունը՝ նպատակադրելով նպաստել մակրոտնտեսական կայունությյան ձեռքբերմանը, միաժամանակ հաշվի առնելով պակասուրդի և պետական պարտքի կրճատման ու պարտքային կայուն միջավայրի ձևավորման առաջնահերթությունը:

Արդյունքում, հարկաբյուջետային և դրամավարկային կոորդինացված քաղաքականությունների շնորհիվ չի խաթարվել մակրոտնտեսական կայունությունը՝ 2013 թվականին 12-ամսյա գնաճը կազմել է 5.6%՝ գրեթե համընկնելով տատանումների թույլատրելի

միջակայքի վերին սահմանին, միաժամանակ արձանագրվել է 3.5% տնտեսական աճ: Այդուհանդերձ, 2013 թվականին տնտեսության զարգացման միտումները շարունակվել են նախորդ տարվա համեմատ ավելի դանդաղ տեմպերով, իսկ 2013 թվականի չորրորդ եռամսյակում մասնավոր հատվածի ծախսումների ճեղքվածքը գնահատվել է նշանակալի բացասական և գնաճի վրա ունեցել է 0.9 – 1.0 տոկոսային կետ զսպող ազդեցություն: Այս զարգացումների պարագայում 2013 թվականի չորրորդ եռամսյակում աշխատանքի շուկայում էական անհավասարակշռություններ չեն արձանագրվել՝ նշված ժամանակահատվածում աշխատանքի շուկայի ազդեցությունը գնաճի վրա եղել է չեզոք: Տնտեսական դրական զարգացումների ամրապնդման հիմք է հանդիսացել արտահանումը, որի աճը տեղի է ունեցել արտաքին պահանջարկի դանդաղման և տնտեսության ներքին կարողությունների օգտագործման արդյունավետության բարձրացման պայմաններում: Իսկ հարկաբյուջետային քաղաքականությունը 2013 թվականին նպաստել է գնաճային ճնշումների թուլացմանը՝ բարենպաստ միջավայր ստեղծելով դրամավարկային քաղաքականության իրականացման համար: